Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2025 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի աշխատանքային ծրագրով 2-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Վերանայել Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված գնման երաշխիք ունեցող վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:
- Իրականացնել սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշների վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության մոնիթորինգ:
- Վերանայել գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագները:
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ:
- Իրականացնել Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային շարժական և ամրակցման կապի ծածկույթների ապահովման աշխատանքներ:
- Իրականացնել հանրային կազմակերպությունների 2024 և 2025 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ:
- Լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 25-ի N232-Ն որոշմամբ

սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստերի հրավիրման, անցկացման և գրավոր քվեարկության կազմակերպման կարգը:

- Մշակել և հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակել հանձնաժողովի 2024 թվականի գործունեության հաշվետվությունը:

Եռամսյակային արդյունքներով ամփոփել և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:
- նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական, գազամատակարարման ցանցերին, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացումների եռամսյակային ցուցանիշները: